

Ժողովածուն կազմեց՝ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի դասավանդող՝  
Կարինե Պետրոսյանը

## ՆՈՐ ՏԱՐԻՆ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

### Ցանկ

Ռափայել Պատկանյան

[Նոր տարի](#)

Ղազարոս Աղայան

[Նոր տարի](#)

Հովհաննես Թումանյան

[Նոր տարի](#)

Ավետիք Իսահակյան

[Նոր տարու գիշերը](#)

Միսաք Մեծարենց

[Նոր տարին](#)

Եղիշե Չարենց

[Նոր տարվա համար](#)

Համո Սահյան

[Խոսք Նոր տարվա](#)

Զահրատ

[Կադանդի գիշեր](#)

[Կադանդի գազել](#)

Մետաքսե

[Նոր տարվա գիշեր](#)

Ռափայել Պատկանյան

Նոր տարի

Երնե՛կ, թե այս Նոր տարին

Վերջ տար հայի ցավերուն,

Չարը կորչեր, ու բարին

Բուն դներ մեր սրտերուն;

Երնե՛կ, թե այս Նոր տարին

Ազատ շնչեր Հայաստան,

Եվ շուրջ Մասիս մեր սարին

Փայլեին արտ-անդաստան:

Երնե՛կ, թե այս Նոր տարին,  
Ոտքի կանգներ Հայաստան,  
Եվ կիսաքանդ մեր Կարին  
Լիներ քաղաք մի ոստան:  
Երնե՛կ, թե այս Նոր տարին  
Հայ սրտի մեջ ուժ հոսեր,  
Ապավինած յուր սրին,  
Հայը բնավ չի սարսեր;  
Երնե՛կ, թե այս Նոր տարին  
Հայ ազգ ի մի գումարվեր,  
Ի գլուխ Կարնո հայ ամրին  
Հայ դրոշակ ծածաներ:  
Հայեր, երբեք չերկմըտենք,  
Կկատարվի այդ ամեն,  
Եթե իսպառ մենք հանենք  
Փոքրոգություն մեր սըրտեն:

### **Ղազարոս Աղայան Նոր տարի**

Արի, դու,արի  
Քո գալղ բարի,  
Միրուն Նոր տարի,  
Նոր օրեր բեր մեզ:

Ձյուն տուր սարերի,  
Անձրև՝ արտերին,  
Կարկուտը՝ չարին,  
Զով արևը՝ մեզ:

Անթուփ ծաղիկից,  
Աններկ կարմրուկից,  
Բարի ցավերից  
Ազատ պահիր մեզ:

Մայրական գթով,  
Գրկաբաց ձեռքով,  
Ուրախ ժպիտով  
Առ քո գիրկը մեզ:

Տարին բոլորեց,  
Երեսը շրջեց,  
Նոր դիպակ դրավ,  
Նոր դեմք ցույց տրվավ:

Մարդիկ խնդացին,  
Կերան, խմեցին,  
Նորադեմ տարուն  
Դիմավորեցին:

### **Հովհաննես Թումանյան** **Նոր տարի**

Դու էլ արի  
Նորեկ տարի  
Գըլխիս վերից  
Անցիր-գնա,  
Ինչպես մի օր  
Թեթևասահ,  
Որ արևի  
Վառ ժրպիտով,  
Հողմ ու շանթի  
Սառն աղմուկով  
Անց է կենում  
Ծաղկի վերից,  
Իսկ նա հովտում,  
Իր հուսալից  
Աչքը վերև,  
Փոքրիկ, չնչին,  
Ցնծում է կամ  
Մոտ է վերջին...  
Ես էլ էնպես,  
Նորեկ տարի  
Մի խոտ, մի բույս  
Ոչ ավելի:  
Մի երկիր է  
Տվել մեզ կյանք,  
Մի երկինք է  
Պահել իր տակ,  
Եվ գեղեցիկ,

Փարթամ, հպարտ  
Մի խոտ, ծաղիկ  
Կամ թե մի մարդ...  
Մենակ իրար  
Չենք հասկանում,  
Բայց ապրում ենք  
Մի սահմանում,  
Մի ճամփով էլ  
Պիտի գրնանք,  
Կրրկին ձուլվենք,  
Մի հող դառնանք,  
Անհետ,անտես  
Կորչենք, ինչպես  
Ջուր հրնչուններ  
Մի մեծ երգի,  
Լույս հյուլներ  
Տիեզերքի...

### **Ավետիք Իսահակյան** **Նոր տարու գիշերը**

Գիշերվա կեսին զանգակատունից  
Հնչեց Նոր տարվա ժամը ցնծալից:  
Անցավ հին տարին, անցել է ինչպես  
Մի հավերժություն մինչև այս րոպեն,  
Մի հավերժություն անհուն, անսահման,  
Որ չքացել է ոչնչի նման:

Եվ բեռնավորված հույսով ու վախով  
Մեռավ հին տարին իր հետ թաղելով  
Ապարանքները իմ երազանքի,  
Որ շինել էի միշտ ժամանակին  
Քանդվող ծովափին:

Եվ ի՞նչ կա այսօր,  
Կանգնել եմ մենակ և ուղեմուր  
Ու միտք եմ անում  
Հրճվանքը կյանքիս, և վիշտը մնաց  
Սրտիս հատակում, ինչպես սև մըրրուր:

Կանգնել եմ հիմա անհույս և թափուր՝  
Աչքերըս սուգած խավար անհայտում  
Գալիք օրերի. ականջ եմ դրնում  
Զանգակատունից խորին գիշերին  
Նոր տարվա ժամի հրնչող զարկերին,  
Որ ինչպես սրբի հարվածներ բեկ-բեկ,  
Կտրում են կյանքիս թելերը մեկ-մեկ:

## **Միսաք Մեծարենց**

### **Նոր տարին**

Այս գիշեր հագված, սրգված Նոր տարին  
Առտվան լույսին կսպասե տենդոտ,  
Ոգիներ անդարձ կորզեցին, տարի՜ն  
Մեր գրկեն հինին ձայները ծանոթ:

Նոր տարվա ընծա պայծառ լուսինկան  
Սազեր է գյուղին լեռները բուլոր  
Երգերը ծերին, ճիչերը մանկան  
Կ՛արձագանգեն թունդ խազերով մուլոր:

Իդձերու շարք մը պլլված սրտին՝  
Վառ հույզերու մեջ կ՛օրրե զայն ուժգին,  
Բորբոքած հուրքովն հույզերու անշեջ  
Կը ծփան սիրտերն ըղձանքներու մեջ:

Գիշերվան վերջին պահերու լրոին  
Ձայներն ու լույսերն հանկարծ կը մարին,  
Եվ բեհեզներով կապույտ կամարին  
Պճնրված աշխարհ կուգա Նոր տարին:

## **Եղիշե Չարենց**

### **Նոր տարվա համար**

Ես Նոր տարի եմ մտնում  
բայց նորն ի՞նչ բանի  
Ձգտում է սիրտն իմ տրտում...  
...Մի հսկա անիվ,  
Անկախ կամքից իմ ու քո

կամքից, Ղեկավար,  
Շուռ է գալիս ու դառնում  
հավիտյան ու հար:  
Ու դառնալու է անվերջ...  
մինչև չմնա  
Ոչ մի ձգտում, ոչ մի կամք  
աշխարհի վրա:  
Օ, Նիրվանա, տևական,  
քեզ եմ անրջում  
Իմ փոթորկոտ, իմ հախուռն  
օրերի վերջում...

### **Համո Մահյան** **Խոսք Նոր տարվա**

Դու երազների կանչով ես գալիս՝  
Քնքշությամբ, գինով, հավատով լեցուն,  
Ամենքն ամենուր քեզ տուրք են տալիս,  
Ամբարած քո մեջ սեր ու լիություն:  
Երգի, խնդության ծով ալիքներում  
Չենք զգում հի՞ն ես, թե նոր ես, իրավ,  
Միայն, երբ փոքրիկ թերթիկն ենք պոկում,  
Զգում ենք, որքան կյանքի ենք ծարավ:  
Ճերմակ ձյուններով մեզ փարվիր անտես,  
Մեզ արևների տենչին հասցրու,  
Մենք էլ մանուկ ենք, նորածին քեզ պես,  
Արհավիրքները տար մեզնից հեռու:  
Դու խաղաղության կանչով ես գալիս,  
Եվ խոստումնալից, և անխրատական,  
Թող ծաղկուն լինի ծնունդդ գալիք,  
Որ հավերժանա մարդն արարչական:

### **Զահրատ** **Կադանդի գիշեր**

Ամեն ինչ ծայրեն վերսկսելու,  
Ի վերջո նորեն այսպես ըլլալու  
Տոնն է այս գիշեր:

Լույսը վառեցեք, եթե չի բավեր  
Ձեզ տաքցնելու մեր լույսը ներքին;  
Պահ մը ամեն ինչ վերջացնելու,  
Ամեն ինչ ծայրեն վերսկսելու  
Տոնն է այս գիշեր:  
Հույսեր վառեցեք, եթե չեն բավեր  
Ձեզ տաքցնելու ձեր հույսերը հին,  
Տոնն է այս գիշեր:  
Ի վերջո նորեն այսպես մնալու,  
Քիչ մը ավելի հուսալքվելու  
Տոնն է այս գիշեր:  
Երգել փորձեցեք, եթե չէք մոռցեր  
Խանդոտ երգերը ձեր պարմանության  
Տոնն է այս գիշեր:  
Ջուր տեղ վատնված օրերն հիշելու,  
Գոյության տխուր հաշվեկշիռին  
Տոնն է այս գիշեր:  
Լույսեր և հույսեր վառեցեք գույն-գույն,  
Երգեր երգեցեք հինն ու նորեն,  
Տոնն է այս գիշեր:  
Գոյատևելու տոնն է այս գիշեր:

### **Կաղանդի գագեղ**

Բարև ըսեմ այս Կաղանդին ու բոլոր հին Կաղանդներուն,  
Մեր Կաղանդին, ձեր Կաղանդին ու բոլորին Կաղանդներուն:

Ես տարվույն մեջ, տարիեն դուրս, ինչ Կաղանդներ եմ ողջուներ,  
Թող ձերն ըլլա այս գիշերվան կարմիր գինին Կաղանդներուն:

Տոն եմ տոներ ամեն անգամ, երբ նոր սիրով մ'եմ գինովցեր,  
Ամեն անգամ լույսն եմ խմեր այս լուսածին Կաղանդներուն:

Դուք ցնծացեք, դուք բերկրացեք ու խայտացեք այս գիշեր դուք,  
Խուզարկեցեք արևասքող գանձն ու ոսկին Կաղանդներուն:

Իմ Կաղանդին ըսպասեմ ես Մեր-Կաղանդիս նորահրրաշ,  
Երբ դուք մըռայլ օրերե վերջ երթաք կրկին Կաղանդներուն:

Բարև ըսեմ այս Կաղանդին ու բոլոր հին Կաղանդներուն,  
Մեր Կաղանդին, ձեր Կաղանդին ու բոլորին Կաղանդներուն

## **Մետաքսե Նոր տարվա գիշեր**

Թե աշխարհում փակ դռներ կան, թող որ բացվեն այս գիշեր,  
Ու Նոր տարին նոր խնդությամբ թող ներս մտնի այս գիշեր,  
Թե կան դատարկ, համր տներ՝ մանկան ճիչով թող լցվեն,  
Ով փնտրում է սրտանց մեկին՝ հանկարծ գտնի այս գիշեր:  
Թե կան լացող, տխուր աչքեր, թող ծիծաղեն այս գիշեր,  
Կանչող ձեռքերն իրար հասնեն, հրաշք ապրեն այս գիշեր;  
Թե կան սրտեր՝ չար նախանձով, դառնան բարի ու ներող,  
Եվ ուրիշի ուրախ կյանքով խանդավառվեն այս գիշեր:  
Թե մոլորված անցորդներ կան, դարձի թող գան այս գիշեր,  
Սրբագործված սիրով մտնեն իրենց օջախն այս գիշեր,  
Թե կան բախտի փշոտ ճամփեք, թող ծաղկունքով կանաչեն  
Ու երջանիկ սպասումով բոլորն արբեն այս գիշեր...  
Թե աշխարհում պանդուխտներ կան, թող տուն դառնան այս գիշեր,  
Հայրենական հավերժությամբ ողջագուրվեն այս գիշեր: